

1828 թ. ԹՈՒՐԲՍԱՆՉԱՅԻ ԽԱՂԱՂ ԴԱՇՆԱԳԻՐԸ
ԿՆՔԵԼՈՒՑ շԵՏՈ ԹԵՂՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌՈՒՄ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ
ԶԱԽԶԱԽՈՒՄԸ

1826 - 1828 թթ. Ռուս-իրանական պատերազմի ավարտից հետո 1828թ. կնքվեց Թուրքմանչայի պայմանագիրը: Մի շարք իրանական պատմաբանների կարծիքով, Ռուսաստանի կողմից Իրանին ներկայացված պայմանները նվաստեցնող և թալանչական էին:

1827 թ. օգոստոսի 1-ին գեներալ-ադյուտանտ Իվան Ֆ. Պասկևիչի հրամանատարության տակ գտնվող ռուս զորքերը գրավեցին Էրիվանի բերդը և շարունակելով արշավը դեպի հարավ-արևելք, շուտով գրավեցին Խոյը, Մարաղան, Ուրմիան, Կուֆլանկուխը և Արդեբիլը, իսկ մի փոքր ուշ՝ նաև Թավրիզը: Էրիվանի բերդի անկումից հետո ռուսներին գերի հանձնվեցին ավելի քան 2,5, հազար իրանական սարվազ:

1827թ. նոեմբերի 6-ին Դեղ-Խարդան և Թուրքմանչայ գյուղերի հարևանությամբ (Միանեից 33 կմ դեպի արևմուտք) ռուս-իրանական (պարսկական) պատվիրակությունների միջև սկսվեցին բանակցություններ 1826-1828թթ. պատերազմի ավարտի մասին: Ռուսական պատվիրակության կազմում էր նաև Ա.Ս.Գրիբոեդովը: 1827թ. մայիսի 8-ին գրված Գրիբոեդովի անձնական նամակներից մեկը վկայում է, որ իր կողմից նախապես կազմվում էին Իրանի հետ խաղաղ պայմանագրի տարատեսակ տարբերակներ՝ երևի թե գեներալ Ի.Ֆ.Պասկևիչի կարգադրությամբ (Семенов А.С., 1963. էջ 125): Այս հարցի ուսումնասիրությամբ զբաղվող Բ.Պ.Բալայանը կարծում է, որ այդ նախագիծը կազմվել է արքեիպիսկոպոս Ներսես Աշտարակեցու հորդորների և խնդրանքների անմիջական ազդեցության ներքո (Акты КАК, к. 7, 1875. էջ 588-589): Նա խնդրում էր Իրանի հետ ռազմական գործողությունների ավարտից հետո հոգ տանել ռուս զորքերի կողմից ազատագրված Էրիվանի խանության տարածքներում հայ բնակչության վերաբնակեցման մասին (Балаян Б.П. 1988, էջ 180): 1827 թ. Նոեմբերի 7-ին իրանական պատվիրակությունը զվթավորող Իրանի ժառանգորդ արքայազն Աբբաս Միրզան համաձայնվեց Օրդուբադը (Շոքորե Սահադ բեգլայրբեկություն) և Էրիվանի ու Նախիջևանի խանությունները, իսկ ավելի ուշ՝ Թալիշական խանությանը Ռուսաստանին <<հավերժ>> տալուն (Азатян Г.Г. 2000, էջ 25-26; Վախիդ Նիյա: Գարարդադիայե... 1362. էջ 291-293):

1828թ. փետրվարի 10-ի Թուրքմանչայի դաշնագրի 10 և 15 հոդվածներին համաձայն նախատեսվում էր եռամյա ժամկետ պարսիկ շահի հպատակության տակ գտնվող անձանց անշարժ գույքի վաճառքի և փոխադարձ վերաբնակեցման համար՝ ինչպես ոռոս գորքերի կողմից գրավված Իրանի նախկին նահանգներից, այդպես էլ պարսկական նահանգներից Ռուսաստանին անցած տարածքներ (Հրանատ Ութսըն, Տարիխ-է Իրան... 1354, էջ 184; Азатын Г.Г., 2000, էջ 25-26): Ըստ պատմաբանների, այս սկզբունքային դրվագը պայմանագիր է մտցվել Ա.Ս.Գրիբոեդովի առաջարկով: Թուրքմանչայի պայմանագրի դրույթների իրականացման նպատակով իրանական մայրաքաղաք Թեհրան որպես ոռոս դիվանագիտական առաքելության ղեկավար ուղարկվել էր Ա.Ս.Գրիբոեդովը (Bournoutin G. 1992, p 89, 121): Ռուսաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև հարաբերությունները խիստ լարվել էին, և անհրաժեշտություն կար հնարավորինս արագ ավարտել ոռոս-իրանական պատերազմը: Ինչպես նշում են իրանական պատմաբանները, 19-րդ դարի ողջ պատմությունը ողողված է Ռուսաստանի և Անգլիայի կողմից Իրանի հյուսիսային, կովկասյան նահանգները տարանջատելուն ուղղված պայքարով (Atkin Muriel, 1980, P. 9 – 10):

Այդուամենայնիվ, մի շարք իրանական պատմաբաններ կարծում են, որ ողջ Հարավային Կովկասը (Արևելյան Վրաստանը, Հայաստանը, Ադրբեջանը և առավել ևս Դաղստանը) պատմականորեն օրինական կերպով պատկանում էին Իրանին, իսկ Ռուսաստանը <<միշտ ձգտում էր հնարավորինս ընդլայնվել դեպի հարավ>>՝ համաձայն <<Պետրոս Առաջինի կտակին, իսկ Անգլիան ձգտում էր խանգարել Ռուսաստանին շատ մոտենալ Հնդկաստանի սահմաններին>> (Afchar M. 1921, p. 34, 45): Եվրոպական պատմաբաններ Գ.Բրեսլաուն և Ռ.Կալլենը վաղուց ապացուցել են, որ ոչ մի <<Պետրոսի կտակ>> գոյություն չունի և այդ կեղծիքը բացահայտված է, սակայն որոշ իրանական պատմաբաններ այսօր էլ են շարունակում պնդել, թե Պետրոս Առաջինը կոչ է արել ոռոս արտաքին դիվանագիտությանը անպատճառ հասնել տաք երկրներին Իրանի տարածքով՝ հեռանկարում ունենալով Պարսկական ծոցը և Հնդկական օվկիանոսը: Պետք է նշել, որ դիտարկելով ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը, նրանցից շատերը համաձայն են այն կարծիքին, թե <<Պարսկաստանը չունի օրինական իրավական հիմունքներ կամ իրավունք այս երկու հինավուրց հայկական նահանգներին՝ Էրիվանի և Նախիջևանի խանություններին հավակնելու >> (Afchar M. 1921, p 46):

Կա նաև կարծիք, որ Թուրքմանչայի պայմանագրից հետո սկիզբ առավ Իրանի և Ռուսաստանի միջև տնտեսական համագործակության, ինչպես նաև հյուսիսային հարևանի համայնակրթական առաքելության մի

նոր փուլ: Ընդամին, արևմտյան պատմաբանները գրում էին, որ միայն անգլիացիների Ռուսաստանին ցուցաբերած ակտիվ հակազդեցության շնորհիվ 1826-1828թթ. պատերազմում կրած պարտությունից հետո Իրանին հաջողվեց պահպանել անկախությունը և նվազեցնել տարածքային կորուստները (Էլզար Խ. Դին վա դուլաթ... 1369, էջ 147-149; Atkin M. 1980, p.96): Այդուհանդերձ, չպետք է մոռանալք, որ նույնիսկ Թուրքմանչայի պայմանագրի ստորագրումից հետո անգլիացիները շարունակում էին դրդել շահին պատերազմել Ռուսաստանի հետ, խոստանալով վարկեր և զենք, իսկ Իրանում անգլիական առաքելության մի շարք սպաներ ճանապարհորդում էին հայկական գյուղերով և հորդորում հայերին հրաժարվել Ռուսաստանի նահանգ դարձած նախկին Էրիվանի և Նախիջևանի խանությունները վերաբնակեցնելուց (Էլզար Խ. 1369, էջ 149-150):

Արևմուտքի որոշ գիտնականներ իրավացի էին, որ Ռուսաստանի հետ պատերազմը Ղաջարական տոհմին հարկավոր էր առաջին հերթին շահնշահի գահին իր իսկ գահակալությունն ամրապնդելու համար, քանզի Իրանում դեռ պահպանվում էին գահին հավակնող Սեֆյանների տոհմի ներկայացուցիչները (Atkin M. 1980, p.92-95): Այսպիսի դժվարին ժամանակ Թեհրանում դեսպան նշանակվեց Ա.Ս.Գրիբոեդովը, որը մեկնեց այնտեղ, որպես առաջնային խնդիր ունենալով Իրանի կառավարության կողմից ղաջնագրի պայմանների անվերապահորեն կատարման ապահովվումը, և Իրանի հյուսիս-արևմտյան նահանգներից Ռուսական կայսրության տարածք հայերի վերաբնակեցման կազմակերպումը: Իրանական պատմագրությունում գիտական ուսումնասիրությունները մեկից մյուսը փոխանցում են այն վարկածը, թե Ալլայար խանի հարեմի պատանդ կանանց ազատելու տենդով տառապող Ա.Ս.Գրիբոեդովը այլևս հաշվի չէր առնում այն հանգամանքը, որ նրանք ընդունել են մահմեդականություն և նույնիսկ երեխաներ ունեն իրենց մահմեդական ամուսնուց՝ չնայած որ հանդիսանում էին ոչ թե օրինական կին, այլ ընդհամենը հարձ: Մակայն ընդհանրապես անտեսվում է այն փաստը, որ գերիների ազատումը և ազատ տեղափոխությունը Ռուսական կայսրություն պայմանավորվում էր Թուրքմանչայի ղաջնագրի համապատասխան հոդվածներով, և Ա.Ս.Գրիբոեդովը ոչ մի կամայականություն թույլ չէր տալիս՝ պարզապես պահանջելով պարսկական իշխանություններից կատարել իրենց իսկ կողմից ստորագրված պայմանագրի պահանջները (Комиссаров А.С., 1975, էջ 191-192): Բացի այդ, դա հանդիսանում էր ռուսական դեսպանության ղեկավարի անմիջական պարտականությունը, իսկ ռուսական կառավարությունը՝ ի դեմս արտգործնախարար քոմս Կ.Վ.Նեսսեղոդեի, իր հանձնարարականներում և Ա.Ս.Գրիբոեդովին ուղղված նամակներում պահանջում էր

վերջինիցս գործուն քայլեր իրականացնել: Հատկանշական է, որ ավելի ուշ, երբ Թեհրանում ռուսական դիվանագիտական առաքելությունն ավերվել էր մոլեգնած ամբոխի կողմից, Արտգործնախարարության աշխատակիցներն իրենք էին մեղադրում Ա.Ս.Գրիբոեդովին Պարսկաստանի կողմից վճարման ենթակա փոխհատուցման հարցին ավելորդ կարծրություն ցուցաբերելու և իրանցիների հետ բացահայտ կոպիտ վերաբերվելու մեջ:

1928թ. նոյեմբերին, գլխավորելով դիվանագիտական առաքելությունը, Ա.Ս.Գրիբոեդովը ժամանեց Թեհրան: 1828թ. նոյեմբերից մինչ 1829թ. հունվարի 30-ը Ա.Ս.Գրիբոեդովի Թեհրանում գտնվելը այքի է ընկել միայն նրանով, որ այդ ժամանակ գահակալող Ֆաթիա-Ալի շահը ցուցաբերեց աննախագիտ ընդունելություն՝ մշտապես հրավիրելով ռուս դիվանագիտական առաքելության ղեկավարին պալատ, կատարելով բազմաթիվ, բայց անօգուտ նվիրատվություններ և պերճախոսություններ: Հնարավոր է, որ այս իսկ տարբերակով փորձում էին շեղել դեսպանության ղեկավարին պարտականությունները կատարելուց, սակայն Ա.Ս.Գրիբոեդովը համառորեն շարունակում էր իրականացնել նախանշված վարքագիծը՝ բոլոր ընդունելությունների ժամանակ պնդելով ռազմական փոխհատուցման մնացորդի վճարման մասին (Մահմուդ Մ. Տարիխ-ե..., 1344, հ. 1, էջ 172-181): Նույնիսկ 1812թ. Հայրենական պատերազմի մասնակից ռուս զեներալ Դենիս Դավիդովը, ով այդ ժամանակ ծառայում էր ռուսական Կովկասյան բանակում, իր հուշերում Թեհրանում ռուսական դեսպանատան ավերման իրադարձությունները լուսաբանելիս անվանում էր Ա.Ս.Գրիբոեդովին <<անփույթ դիվանագետ>>, սակայն անձամբ նման փաստաթղթերին ծանոթ չէր: Թեհրանի իրադարձությունների մասին նա իմացել է պարսկական նախարարներից և բարձրաստիճան պաշտոնյաներից, քանզի ռուսական առաքելության միակ փրկված անդամը՝ Ի.Ս.Մալցեվը, միայն մարտ ամսին հեարավորություն ունեցավ Թիֆլիս հայտնել կատարվածի իր վարկածը: Բայց այդ ժամանակ Դ.Դավիդովը իրանական մայրաքաղաքից հեռու գտնվող ռուս-թուրքական ռազմաճակատի Կարսի հատվածում էր:

Թեհրանում ռուս դիվանագետների սպանության գործում ակտիվ մասնակցություն ունեցան անգլիացի դիվանագետներ Ջ.Մաքդոնալդը և Դ. Մաք-Նեյլը: Իրենք էին ռուսական ճամբար ուղեկցում ռազմական փոխհատուցման դրամով լի պարկերը, իրենք էին Իրանի շահի անունից բանակցում զեներալ Պասկեվիչի հետ, պահանջելով ազատել ռուսական զորքերից Թավրիզն ու Արդեբիլը՝ գումարը ստանալու փոխարեն: Միաժամանակ, թուրք սուլթանը Իրանի շահին դաշինք և օգնություն է առաջարկում, որպես փոխհատուցում պահանջելով վերսկսել ռազմական գործողությունները

Ռուսաստանի հետ, հաշվի առնելով 1828-1829 թթ.-ի ռուս-թուրքական պատերազմը (Bournoutin G. 1992, p 123-125; Семенов А.С. 1963, էջ 125):

Նման դժվարին պահին ռուս դիվանագետները ձգտում են գերծ պահել Իրանը նոր պատերազմից, միաժամանակ փորձելով կորզել ռազմական փոխհատուցման ամբողջ գումարը: Թուրքիայի հետ պատերազմելու և շահի դատարկ քսակի առկայության պարագայում Ա.Ս. Գրիբոեդովը Պետերբուրգ էր գրում Պարսկաստանի կողմից վճարվող ռազմական փոխհատուցման նվազեցման (այդ պահին արդեն վճարված էր 20 մլն. արծաթե ռուբլի պարտքի 70%-ը), գումարի մնացած 10%-ի վճարումն զեղչելու առաջարկի մասին՝ ի պատասխան ակնկալելով Պարսկաստանի համաձայնությունը որպես Ռուսաստանի դաշնակից պատերազմ հայտարարել Թուրքիային: Սակայն այդ առաջարկը չընդունվեց, և Պետերբուրգից նորից պահանջում էին ռազմական փոխհատուցման ամբողջական վճարումը: Ա.Ս.Գրիբոեդովի սպանությունից հետո կայսր Նիկոլայ 1-ը համաձայնեց նրա առաջարկին և զեղչեց ռազմական փոխհատուցման մնացած 10%: Այդ ժամանակ Պետերբուրգ ժամանեց համերաշխության պատվիրակությունը շահի թոռ Խոսրով Միրզայի (թագաժառանգ Աբբաս Միրզայի որդու) գլխավորությամբ, որն էլ նվիրեց ռուս կայսրին 88 կարատ քաշով հանրահայտ <<Շահ>> ադամանդը: Դա ռուս դիվանագիտական առաքելությանը վճարված յուրատեսակ փոխհատուցում էր՝ դեսպանատան ջախջախման և այլ հանցուցանիքները խաղաղ ճանապարհով լուծելու համար (Минорский В.Ф., 1923, էջ 9): Իսկ արդեն 1828 թ.-ի դեկտեմբերին, Արտգործնախարարության Ասիական բաժանմունքի պետ Կ.Կ. Ռոդոֆինկինին ուղղված իր նամակներից մեկում Ա.Ս.Գրիբոեդովը այսպես բնութագրեց իրանական պաշտոնյաների և ընդհանրապես պարսից ժողովրդի հետ շփումների ընթացքում առաջացող ծայրաստիճան լարվածությունը, հաշվի առնելով ռուս-թուրքական պատերազմը. <<Չափազանց զբաղված եմ, ծայրաստիճան լարվածությամբ հետևում եմ, որպեսզի Թեհրանում ինչ-որ տհաճություն չպատահի՝ թուրքերի հետ մեր պայքարի ժամանակ>> (Комиссаров А.С., 1975, էջ 192):

1828-1829թթ.-ի հունվարին Թեհրանում հաստնանում էր ռուսական առաքելության դեմ ուղղված դավադրությունը, որը հրահրում էին անգլիացի դեսպանորդները: Նման գայրույթ առաջացնում էր այն հանգամանքը, որ իրանահայերը փնտրում և զրանցում էին այնպիսի քրիստոնյաների (մեծամասնությամբ՝ հայերի և վրացիների), որոնք ցանկանում էին վերադառնալ հայրենիք, տրամադրում էին այդ ցուցակները ռուս դիվանագետներին, որոնք, իրենց հերթին, այդ ցուցակների հիման վրա պաշտոնապես պահանջում էին թույլատրել ցուցակագրված անձանց անխափան արտա-

գաղթը դեպի Կովկաս: Միայն այն անձինք, ովքեր իրանական պաշտոնյաների ներկայությամբ հայտնում էին ցանկություն վերադառնալ հայրենիք, թողնվում էին ռուսական դեսպանատան կացարան հանդիսացող 4 կառույցներից մեկում: Սակայն մուշտաիդ Միրզա Մեհիդի և պալատի նախարար Ասաֆ ադ-Դոուլե Ալլայար խանի գլխավորած շիա հոգեվորականները ռուս դեսպանորդին մեղադրեցին շիա մահմեդականների ընտանիքների քայքայման մեջ, հավելելով, որ ռուսները նույնիսկ մայրերից են խլում երեխաներին (Балааян Б.П. 1988, էջ 242-245): Պատճառ հանդիսացավ այն փաստը, որ Ա.Ս.Գրիբոեդովը դեսպանատանը ապաստան էր տրամադրել հայ Միրզա Յակուբին եւ երկու վրացի կանանց, որոնք փախել էին Ալլայար խանի հարեմից (Մահմուդ Մ. Տարիխ-է..., 1344, հ. 1. էջ 184-186): Կենտրոնական մսկիթում մուշտաիդ Միրզա Մեսիխը ամբոխին կոչ արեց հաշվեհարդար տեսնել ռուս առաքելության հետ և վերադարձնել դեսպանատան տարածքում թաքնված <<զյաուրներին>>: 1829 թ. հունվարի 30-ին կատաղի ամբոխը մուտք գործեց դեսպանատան բոլոր 4 տարածքները և տեղի ունեցավ հանցավոր կոտորած: Ա.Ս.Գրիբոեդովը փախուստի չդիմեց (սակայն, ըստ իրանական աղբյուրների նման հնարավորություն կար հարձակումից նույնիսկ կես ժամ առաջ՝ շահի նախարարները առաջարկում էին թաքնվել Ֆաթիա-Ալի շահի պալատում, իսկ հայերը՝ հայկական եկեղեցու տարածքում), հակառակը՝ դիմավորեց ջարդարարներին մեծ սառնասրտությամբ, փորձելով հանդարտեցնել կրքերը (Atkin M., 1980, p. 95-99): Բայց ամբոխը հարձակվեց նրա վրա և սուսերով մասնատեց: Թիկնագորի բոլոր կազակները և ծառաները սպանվեցին, փրկվեց միայն դեսպանատան քարտուղար Ի.Ս.Մալցեվը: Կոտորածի ժամանակ նա 2000 ռուբլով կաշառեց Թավրիզի մեհմանդար Նազար Ալի խանի առանձնասենյակի պահակագործի պարսիկ սարվազներին, պահանջելով փակ պահել դուռը, և թաքնվեց մինչ ուշ երեկո: Գիշերը իր հետևից եկան շահի պալատականները, և պարսկական հագուստով տեղափոխեցին պալատ՝ շահի մոտ: Այդպես փրկվեց ռուս դիվանագիտական առաքելության ջարդի միակ վկան:

Մի քանի օր անց շահը որոշեց մեղանշական առաքելություն ուղարկել ռուս կայսր Նիկոլայ Առաջինին, որը գլխավորեց իր թոռը՝ Խոսրով Միրզան (Балааян Б.П. 1988, էջ 127): Բայց, քանի դեռ ընդանում էր ռուս-թուրքական պատերազմը և թուրքերի հաղթանակը Կարսում կամ Բալկաններում կարող էր կտրուկ փոխել իրավիճակը, շահը դատարկ խոսակցություններով փորձում էր ժամանակ ձգել, ազդել գեներալ Ի.Ֆ.Պասկևիչի վրա՝ սպասելով պատերազմի ավարտին: Միայն 1829 թ-ի ապրիլին Խոսրով Միրզան ժամանեց Թիֆլիս, որտեղից մայիսի վերջին

մեկնեց Պետերբուրգ: Ռուսաստանի մայրաքաղաք եւ ժամանեց օգոստոսին, երբ Բուլղարիայում գտնվող թուրքական զորքերը արդեն հանձնվել էին, իսկ կովկասյան ճակատում գեներալ Պասկեվիչը գրավեց Կարսը և էրզրումը: Ամեն ինչ պարզ էր: Պետք էր ցրել ռուս կայսրի ղեկավարությունը Թեհրանում ռուսական առաքելության կոտորածի վերաբերյալ: Միայն 1829թ.-ի փետրվարի 16-ին, սպանությունից 6 օր անց ջարդարարներից մեկը Գուրգեն խան Ջուլֆացուն ցույց տվեց սպանված ռուսների մարմիններով լի մի հոր: Այդ ժամանակ գեներալ Պասկեվիչը սպառնում էր գրավել Թեհրանը և բնաջնջել ամբողջ Ղաջարների տոհմը: Դեռ փետրվարին-մարտին գեներալ Պասկեվիչը խիստ կերպով պահանջեց Իրանից պատժել ռուսական առաքելության անդամներին սպանողներին և հանձնել հանցագործներին ռուսական իշխանություններին: Բայց ռուսական կառավարության պաշտոնյաները և ԱԳՆ աշխատակիցները զգուշանում էին Իրանի հետ նոր պատերազմ սկսելուց, քանզի ռուս-թուրքական պատերազմը դեր շարունակվում էր: Նրանք հայտնեցին Թեհրան, որ պաշտոնական ներողությունները կընդունվեն և այլ քայլեր չեն ձեռնարկվի: Պետերբուրգ ուղղված իր եամակներում գեներալ Պասկեվիչը պահանջում էր Իրանին պատշաճ կերպով պատժել առաքելության անդամների սպանության համար և կարծիք հայտնում, որ կատարվածը՝ Թեհրանում Անգլիայի կողմից կազմակերպված հանցանք է (Акты КАК, т. 7, 1875. էջ 793-795): Ըստ գեներալ Պասկեվիչի, դրանով անգլիացիք ձգտում են բացառել Իրանի մասնակցությունը Թուրքիայի դեմ պատերազմում: Գեներալի կարծիքով, Թուրքիայի հետ պատերազմի ավարտից հետո Կովկասյան ռուսական բանակը պետք է ուղղել դեպի Թեհրան և ոչնչացնել այն (Վախիդ Ն. Գարարդադխայե... 1362, էջ 305):

Բայց ռուսական կառավարությունը այնքան էր վախենում Իրանի հետ նոր պատերազմ սկսելուց, որ համաձայն էր շահի կողմից պաշտոնական ներողություններ ընդունել Թեհրանյան իրադարձությունների վերաբերյալ, և նույնիսկ ներել պարտքերը: Պարսից պատվիրակությանը ընդունեցին մեծ շուքով՝ Պետերբուրգի փողոցներով Խոսրով Միրզային ուղղեկցում էր հեծելազորի շքախումբը և նվազախումբը: Նիկոլայ 1-ը պատվիրակությանն ընդունեց Ձմեռային պալատի Գեորգիևյան դահլիճում, նրան ուղեկցում էին ըստանիքի անդամները, գեներալները, այլ բարձրաստիճան այրեր (Акты КАК, т. 7, 1875. էջ 801): Արքայազն Խոսրով Միրզան կայսրին ընդառաջ եկավ պարանոցից կախած թրով և ուսերին զցած հողով լի ձուրակոշիկներով, ինչը խորհրդանշում էր հնազանդություն և պատրաստակամություն ընդունել կայսրի ցանկացած որոշում: Լսելով շահի մեղանշող նամակը և ընդունելով <<Շահ>> աղամանը, Նիկոլայ 1-ը ձեռք մեկնեց

Խոսքով Միրզային և հայտնեց. «Հավերժ մոռացության եմ մատնում թեհրանյան չարաբաստիկ իրադարձությունները» (Минорский В.Ф., 1923, էջ11):

Համաշխարհային պրակտիկայում դեսպանի սպանությունը անվերապահորեն բերում է պատերազմի: Բայց ոռոսական կառավարությունը գնաց պետական արժանապատվությունը ոտնահարող քայլի, փորձելով խուսափել Իրանի հետ երրորդ պատերազմից: Մեկ այլ պատճառ էր հանդիսանում անգլիացիների հետ նոր հակամարտության վտանգը, քանզի նրանք ուշադիր հետևում էին Կովկասում և Իրանում Ռուսաստանի հաջողություններին: Ռուս դիվանագետները դարձան Ռուսաստանի, Անգլիայի և Իրանի մեծ դիվանագիտական խաղերի գոհը, և նման վիճակում կարող էին հայտնվել ցանկացած այլ դիվանագետներ:

1991թ. ԽՍՀՄ փլուզումից հետո Իրանի բազում պատմաբաններ, ինչպես նաև օտարերկյա իրանագետներ, վերստին փորձում են վերլուծել 1829 թ. Թեհրանում տեղի ունեցած տխուր իրադարձությունները:

Առանձնապես սուր և քննադատական գնահատականներ հնչեցին 1826-1829թթ. Թեհրանում ռուս դիվանագետների աշխատանքի վերաբերյալ: Հիշեցին, որ թագաժառանգ արքայազն Աբբաս Միրզան նույնիսկ ստիպված էր իր պալատների մոմակալները ձուլել Ռուսաստանի պարտքերը վճարելու համար, և նման քայլի իրեն ստիպեցին ռուս դիվանագետները (Ярхо В., 2000, էջ11; Վախիդ Ն. 1362, էջ 307):

Իսկ ինչ արժեն այն պնդումները, որ անգլիացիները չէին ընդդիմանում, և ավելին, նույնիսկ շահագրգռված էին, որ Ռուսաստանը ամրապնդի իր դիրքերը Իրանում: Բավական է ուսումնասիրել 19-րդ դարասկզբի (մինչ 1830 թ.) Ֆորին Օֆիսի փաստաթղթերը, և պարզ կդառնա, որ անգլիացիք ոչ միայն ընդդիմանում էին Ռուսաստանի առաջխաղացմանը, այլև խոստանալով Ֆաթի Ալի շահին գեներ և դրամական մեծ վարկեր, դրդում էին Իրանին դեպի երրորդ պատերազմը Ռուսաստանի հետ: Բավական է ծանոթանալ գեներալ Ի.Ֆ.Պասկևիչի նամակագրությանը և պարզ կդառնա անգլիացիների ստախոսությունը: Աներկբա է՝ վերանայման կամ մանրակրկիտ քննադատության ցանկացած փորձ պետք է հիմնվի այդ ժամանակաշրջանի փաստաթղթերի ուսումնասիրության վրա: Լինելով հեռու միջնադարյան Թեհրանից, հեշտ է կարծիքներ հայտնել, թե ինչպես պետք է գործեին ռուս դիվանագետները, ունեին արդյոք իրավունք առաքելության կազմում ընդգրկել հայերին, որոնք, հնարավոր է, դեռ Ռուսական կայսրության քաղաքացի չէին, արդյոք ռուսները չափազանց կոպիտ էին պահում իրենց Թեհրանում, միզուցե պետք չէր պահանջել ազատ արձակել հարեմի գերի հայ և վրացի կանանց: Նույնիսկ «Շահ»

աղամանդը նվեր է տրվել Նիկոլայ կայսրին ոչ թե դիվանագետների սպանության դիմաց, այլ նրա կողմից ռազմական տուրքը 2 մլն ռուբլով նվազեցման դիմաց, այնինչ աղամանդի իրական արժեքը այդ ժամանակ կազմում էր 200-250 հազար ռուբլի (Ярхо В., 2000, էջ 12):

Իհարկե, իրանական իշխանությունները չպետք է թույլատրեին ռուս դիվանագետների սպանությունը Թեհրանում, սակայն երբ դա արդեն տեղի է ունեցել, պետք էր ցուցաբերել խոհեմ պահվածք և համբերատարություն: Դա թույլ տվեց համոզել ռուս կայսրին և գեներալներին, որ տեղի ունեցածը պատահականություն էր: Այդ պահին Ղաջարների տոհմի ճակատագիրը մազից էր կախված. եթե ռուսները զրավեին Թեհրանը, ապա այդ տոհմի գահակալությանը վերջ կդրվեր: Բայց և ռուսները, և պարսիկները խոհեմ ու խելացի գտնվեցին, երրորդ պատերազմը, որը կարող էր կործանել Իրանը, չսկսվեց:

Օգտագործված գրականության ցանկ

1. Азатян Г.Г. Судьбоносные договора. Ереван, 2000.
2. Акты КАК — Кавказской археографической комиссии. Под ред. А.П. Берзе. Тифлис, Т. VII. 1875.
3. Балаян Б.П. Дипломатическая история русско — иранских войн и присоединения Восточной Армении к России. Ереван, 1988.
4. Колиссаров Д.С. Иранские авторы о гибели А.С. Грибоедова // журн. "Вопросы истории", М., 1975, №8.
5. Миллорский В.Ф. "Цена крови" Грибоедова // журн. "Русская мысль", кн. 3—5. Прага, 1923
6. Семенов А.С. Россия и международные отношения на Среднем Востоке в 20-ые гг. XIX в. Ленинград, АГУ, 1963.
7. Ярхо В. Неудавшаяся карьера поэта — дипломата // журн. "История", Москва. №14, 2005.
8. Atkin Muriel. Russia and Iran/ 1780-1828// The University of Texas at San Antonio, Minneapolis, 1980
9. Afshar M/ La politique europeenne en Perse. Quelques pages de l'histoire diplomatique. Berlin, 1921
10. Bournoulian George. The Khanate of Yerevan under Qajar Rulr. 1795-1828. //Mazda Publishers, California and New York. 1992
11. Վախիդ Նիյա. Գարարդադայե դոուրան-ե Գաջարիե (Քաջար ժամանակաշրջանի պայմանագրերը). Աթաի, Թեհրան. 1362 (պարսկերեն)
12. Էլզար Խ. Դին վա դոուլաթ դար Իրան. Թարջամե-ե Աբուլ Կասեմ Սարի. 1369. Թուս-Թեհրան (Հավատքը և պետականությունը Իրանում) (պարսկերեն)
13. Հրանատ Ուոթթըն. Թարիխ-ե Իրան դոուրե-ե Գաջարիե. Թարջոմե-ե Վախիդ Մազանդարանի. 1354. Սիմորգ-Թեհրան. (Իրանի պատմությունը Քաջարների ժամանակաշրջանում: Թարգմ. Վախիդ Մազանդարանի) (պարսկերեն)
14. Մախմուդ Ս. Թարիխ-ե ռավաբեթ-ե Իրան վա Ինգլիս (Իրանի ու Անգլիայի հարաբերությունների պատմությունը) Ագբալ-Թեհրան. 1344. հ.1/ (պարսկերեն)